ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 093-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի « 12 » ապրիլի 2024 թ-ի թիվ 0454-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հավանություն տալ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ համայնքի բնակիչների կողմից ներկայացված և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկներն իրականացնել գնումների մասին օրենսդրության և այլ նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:
3. Համայնքի ղեկավարին՝ առաջարկների իրականացման ավարտից հետո ամփոփ հաշվետվություն ներկայացնել ավագանուն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
« 28 » օգոստոսի 2024թ-ի N 093-Ա որոշման

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ԱՆՎԱՆՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ԲՅՈՒՋԵՆ
1	Գյուղատնտեսության զարգացման նպատակով գութանի ձեռք բերում	Միշա Օհանյան	1000000
2	Ճանապարհների սանիտարական մաքրման համար ավելի /սանր/ ձեռք բերում	Սամվել Պողոսյան	1000000